

Արձանագրություն N10

2023 թվականի սեպտեմբերի 28-ին ժամը 15.00-ին կայացած՝ եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի նիստի

1. ՀՀ ՊԵԿ ՎՄԸ վարչության պետ Լ. Հարությունյանը ներկայացրեց օրակարգում ներառված 1-ին՝ «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է, որ ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող տրանսպորտային միջոցի ՀՀ տարածքում օտարման գործարքի մասով հաշվարկված ԱԱՀ-ի և այդ տրանսպորտային միջոցի ձեռքբերման (այդ թվում՝ ներմուծման) ԱԱՀ-ի գումարի բացասական տարբերությունը հաշվանցման ենթակա չէ: Միաժամանակ, ուժը կորցրած է ճանաչվում թեթև մարդատար մեքենաների ձեռքբերման կամ ներմուծման մասով ԱԱՀ-ի հաշվանցումների (պակասեցումների) համար օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 10-րդ կետերով սահմանված սահմանափակումները, որոնք վերաբերվում են ոչ իրացման նպատակով ձեռքբերված (ներմուծված) թեթև մարդատար ավտոմեքենաներին: Այդ կետերն ուժը կորցրած ճանաչելու հետ կապված ուժը կորցրած է ճանաչվում նաև օրենսգրքի 73-րդ հոդվածի 8-րդ մասը:

Նախագծով նախատեսվում է նաև ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող տրանսպորտային միջոցների օտարման գործարքների մասով եկամուտը հաշվարկվելու է՝ իրացման նպատակով ներմուծված մասով՝ օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով սահմանված կարգով հաշվարկված՝ ԱԱՀ-ով հարկման բազայի և տվյալ տրանսպորտային միջոցի ներմուծման համար օրենսգրքով սահմանված կարգով վճարված բնապահպանական հարկի հանրագումարի ու 1.2 գործակցի արտադրյալից ոչ

պակաս չափով, ոչ իրացման նպատակով ներմուծվածների մասով՝ տվյալ տրանսպորտային միջոցի համար օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված՝ հաշվեկշռային արժեքի և 1.2 գործակցի արտադրյալից ոչ պակաս չափով: Նշվեց նաև, որ շահութահարկի հաշվարկման նպատակով ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող տրանսպորտային միջոցի ՀՀ-ում օտարման գործարքի մասով հաշվարկված ԱԱՀ-ի և այդ տրանսպորտային միջոցի ձեռքբերման (այդ թվում՝ ներմուծման) ԱԱՀ-ի գումարի բացասական տարբերությունը ենթակա չէ համախառն եկամտից նվազեցման:

Հաջորդիվ ներկայացվեց ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704, 8705 ծածկագրերին դասվող տրանսպորտային միջոցների ՀՀ ներմուծման համար բնապահպանական հարկի դրույքաչափերի փոփոխությանը վերաբերող կարգավորումները:

Ներկայացված նախագծի վերաբերյալ խորհրդի անդամները ներկայացրեցին հետևյալ հարցերն ու առաջարկությունները:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը նշեց, որ ներկայացված կարգավորումներն ընդհանուր առմամբ լավը չեն, հասկանում է, որ նախագծի նպատակը ընդհանուր հարկման համակարգում գործունեություն իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող տրանսպորտային միջոցների գծով ԱԱՀ-ի հարկման բազայի նվազեցմանը նպաստող կարգավորումների վերանայումն է, օտարվող տրանսպորտային միջոցների գծով եկամտի թերհայտարարագրման կանխարգելումը, սակայն առաջարկվող լուծումները չեն կարգավորում դրանք: Նշեց, որ եթե կարգավորումներ ներկայումս նախատեսվում են ավտոմեքենաների մասով, ապա հետագայում անհրաժեշտություն կառաջանա այլ ապրանքների համար ևս նախատեսել կարգավորումներ: Օրինակ՝ եթե ավտոմեքենան ինչ որ բաներից ելնելով արագ ամորտիզացվի 1 տարվա ընթացքում և արժեքը կազմի 0, ապա 1.2 գործակցի կիրառելու համար ինչ պետք է արվի: Նախ հարցրեց ինչով է պայմանավորված 1.2 գործակցի ընտրությունը: Բացի այդ նշեց, որ ներկայացված կանոնի պարագայում ավտոմեքենաների ներմուծման գործարքները կիրականացվեն այլ երկրներով, եկամուտները կգեներացվեն այդ երկրներում և արդյունքում չեն ապահովվի պետական

բյուջեում եկամուտներ, ուստի անհրաժեշտ է մշակել այլ գործիքներ: Նշեց նաև, որ ոլորտում առկա խնդիրները չեն կարգավորվում նախատեսվող կարգավորումներով, ուստի առաջարկեց, որ առավել արդյունավետ կլինի կիրառել հսկողական գործիքներ:

«Աուդիտորների պալատ» ՀԿ նախագահ Ն. Սարգսյանն ևս անդրադարձավ ներկայացված նախագծին, նշելով, որ ուսումնասիրելով վիճակագրական տվյալները նկատել է, որ տրանսպորտային միջոցների արտահանումն ՀՀ-ից նվազել է: Նախագծով բարենպաստ պայմաններ չի առաջարկվում պետական բյուջեի եկամուտներ ապահովելու ուղղությամբ ի տարբերություն այլ երկրների, որտեղ նախատեսված են առավել նպաստավոր պայմաններ նմանատիպ գործարքների համար, օրինակ՝ Ուզբեկստան, Ղազախստան, Տաջիկստան: Նշեց նաև, որ խնդիրը անբարեխիղճ հարկ վճարողներն են, ուստի նրանց նկատմամբ պետք է կիրառել առավել ուժեղացված հսկողական գործիքներ:

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ ներկայացուցիչ Հ. Սահակյանը նշեց, որ համակարծիք է հնչեցված դիտարկումների հետ և նշեց, որ ավելի շատ լոկալ հարց է և ինչու է այդպիսի կարգավորումներ նախատեսվում մեքենաների համար, քանի որ ավելի շատ ապրանքների մասով ևս առկա են նմանատիպ խնդիրներ: Կարծում է, որ նախատեսվող կարգավորումներն աղավաղվում են օրենքի շարադրանքի մեխանիզմները կապված շահութահարկի հետ և, ըստ էության, շահութահարկը դառնում է ԱԱՀ, որը շեղվում է շահութահարկի գաղափարախոսությունից: Նշեց նաև, որ լուծումը ժամանակավոր է, և ԱԱՀ-ի հաշվանցման իրավունք տալը չի կարծում, որ լավ տարբերակ է, քանի որ ներկայումս էլ շատ անձինք ավտոմեքենաների ներմուծման համար ստեղծում են կազմակերպություններ, որպեսզի կարողանան ձեռքբերման ծախսերը նվազեցնել շահութահարկի հարկման բազայից և միաժամանակ ԱԱՀ-ի հաշվանցման իրավունքի տրամադրումը կնպաստի եկամուտների արտահոսքին: Ընդհանուր առմամբ կարծում է կարելի է վարչարարական գործիքներով կարգավորել առկա խնդիրները:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ Կ. Կարապետյանը նշեց, որ ինչպես հասկանում է խնդիրը կազմակերպությունների կողմից մասայական ներմուծումներին է

վերաբերում, ըստ էության կոմիսիոն գործարք է և հարցը կարգավորելու համար նշեց, որ կարելի է կոմիսիոն պայմանագրի ձևը փոխել:

ՀՀ ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանն էլ նշեց, որ ի սկզբանե նախագծով այլ կարգավորումներ են նախատեսված եղել, մասնավորապես՝ նպատակը հանդիսացել է ֆիզիկական անձանց կողմից մեքենաների ներմուծմանը խրախուսումը և նախատեսվում էր ներդնել նաև հետ վերադարձի համակարգ: Սակայն նախագծի այդ տարբերակը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավանության չարժանացավ և արդյունքում նախագիծը ներկայացվում է այդ տարբերակով:

«Հայաստանի գործատուների միություն» ՀԿ նախագահ Գ. Մակարյանն առաջարկեց վերանայել օրակարգերը, քանի որ մարտահրավերներն այլ են: Հաշվի առնելով գործարար միջավայրում առկա վիճակը՝ առաջարկեց որոշ համակարգեր ազատականացնել, մասնավորապես՝ մեղմացնել վարչարարությունը, ժամկետանց պարտավորությունների հետ կապված վերանայել վարչական պատասխանատվության կիրառումը: Նշեց նաև, որ մաքսային բլոկի հետ կապված կներկայացնեն օրակարգեր հետագայում քննարկելու նպատակով: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը նշեց, որ վարչական պատասխանատվության մասով ներկայումս շրջանառվում է նախագիծ, որով նախատեսվում է վերանայել պատասխանատվությունը: Միաժամանակ, նշեց, որ մաքսային ոլորտում կատարված մի շարք բարեփոխումների վերաբերյալ, այդպես էլ համապատասխան արձագանք չեղավ:

ՀՀ ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը հարցրեց, թե արդյոք բնապահպանական հարկի նախատեսվող կարգավորումների մասով առկա են դիտարկումներ, թե ոչ:

«Հաշվապահների ասոցիացիայի» ՀԿ ներկայացուցիչ Տ. Շահբազյանը նշեց, որ նախագծով նշված ԱՏԳԱԱ ծածկագրերի մեջ ներառվում են նաև էլեկտրոմոբիլները և առաջարկեց դրանց մասով բնապահպանական հարկ չգանձել, քանի որ մի կողմից տրամադրվում է արտոնություն (էլեկտրոմոբիլների ներմուծումն ազատված է ԱԱՀ-ից և մաքսատուրքից), մյուս կողմից պետք վճարվի բնապահպանական հարկ: Անդրադարձավ նաև «դիլեր» և «դիստրիբյուտեր» հասկացություններին նշելով, որ այդ մասով հնարավոր է խնդիրներ առաջանան որակելու տեսանկյունից:

ՀՀ ՊԵԿ նախագահ Ռ. Բադալյանն անդրադարձավ բարձրացված հարցերին: Նախ նշեց, որ ավտոմեքենաների ներմուծման կրճատումը պայմանավորված է ՌԴ-ում սահմանված ուտիլիզացիոն վճարի և Վրաստանի տարածքով տարանցման հետ: Նշեց նաև, որ առիթն օգտագործվել է վերանայելու համար բնապահպանական հարկի դրույքաչափերը, քանի որ շատ ցածր են և որոշ դեպքերում ոչ արդարացիորեն սահմանված չեն եղել: Հաշվի առնելով, որ բնապահպանական հարկի դրույքաչափերի փոփոխության հետ կապված առարկություններ չկան, դա ընդունում է ի գիտություն: Ինչ վերաբերում է ԱԱՀ-ի խեղաթյուրման մասով համակարգի կարգավորումների մասով հետ գնալուն, նշեց, որ իրականում այլ պայամանգիր է կնքվում, շուկան խեղաթյուրված է, ռիսկերը շատ են, ընդունելի է համարում այն դիտարկումը որ միգուցե լավ կարգավորում չի նախատեսվում նախագծով, ինչու հենց միայն ավտոմեքենաների մասով: Նշեց, որ սկզբում մեխանիզմն այն էր, որ խրախուսեն ֆիզիկական անձաց, ու քննարկումների արդյունքում ձևավորվեց ներկայացված տարբերակը: Նշեց նաև, որ միգուցե լավ որոշում չէ նման կարգավորումներ նախատեսելը, կքննարկվի ներկայացված դիտարկումներն և անհրաժեշտության դեպքում միգուցե հրաժարվեն նախատեսվող կարգավորումներից: Ինչ վերաբերում է 1.2 գործակցին նշեց, որ այդ մասով ևս կքննարկեն: Ինչ վերաբերում է էլեկտրոմոբիլների մասով բնապահպանական հարկի մասով բացառություն սահմանելուն, նշեց, որ ընդունում է ի գիտություն: «Դիլեր» և «դիստրիբյուտեր» հասկացությունների երկիմաստության մասով ներկայացված դիտարկումների վերաբերյալ նշվեց, որ անհրաժեշտության դեպքում հասկացությունները կվերանայվեն:

ՊԵԿ նախագահի տեղակալ Կ. Թամազյանը ներկայացրեց նախագծի ընդունման անհրաժեշտությունը, ինչպես նաև նշեց, որ վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքով է պայմանավորված նախագծով նման կարգավորումների նախատեսումը:

ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության պետ Օ. Ալավերդյանն անդրադարձավ էլեկտրոմոբիլներն բնապահպանական հարկից ազատելու վերաբերյալ ներկայացված դիտարկմանը՝ նշելով, որ էլեկտրոմոբիլների համար բացառություն սահմանելը համարում է տրամաբանությունից

հեռու, քանի որ էլեկտրոմոբիլի մարտկոցը քիմիական ակտիվ երևույթ է և ևս մեծ վտանգ է ներկայացնում շրջակա միջավայրի համար:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը նշեց, թե ինչու է ՊԵԿ-ը ներկայացնում բնապահպանական հարցերի վերաբերյալ կարգավորումներ, եթե նպատակը բնության վնաս տալը կանխարգելելն է և ոչ թե եկամուտ գեներացնելու խնդիր է առկա: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը նշեց, որ ի սկզբանե այլ նախագիծ է եղել, սակայն տարբեր նախարարությունների հետ քննարկումների արդյունքում նախագիծը փոխվել է և արդյունքում ներառվել են բնապահպանական հարկի վերաբերյալ նախատեսվող կարգավորումները:

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ ներկայացուցիչ Ա. Հարությունյանն առաջարկեց բնապահպանական հարկի մեծությունը հաշվարկվի ոչ թե ավտոմեքենայի արժեքից ելնելով, այլ հաշվի առնվի շարժիչի ծավալը, քանի որ շարժիչի ծավալը որքան մեծ լինի, այնքան ավելի մեծ վնաս կպատճառվի շրջակա միջավայրին:

Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Կ. Թամազյանը նշեց, որ կատարվել են համապատասխան հաշվարկներ, որտեղ հաշվի են առնվել նաև շարժիչի ծավալը և ստացվել է, որ էական տարբերություն առկա չէ, ուստի նպատակահարմար է նշվածի մասով նախագծով ներկայացված տարբերակը:

2. ՀՀ ՊԵԿ ՎՄԸ վարչության պետ Լ. Հարությունյանի ներկայացրեց հաջորդ օրենսդրական նախաձեռնությունը, որով նախատեսվում է սահմանել, որ հարկային հաշվարկներ չեն կարող ներկայացվել նաև այն դեպքերում, երբ հարկային հաշվարկը վերաբերում է այն հաշվետու ժամանակաշրջանին, որը տվյալ հարկատեսակի գծով գտնվում է ստուգման ընթացքում կամ այն հաշվետու ժամանակաշրջանին, որի ստուգումը՝ տվյալ հարկատեսակի մասով, սկսվել է, սակայն հաշվարկի ներկայացման օրը ստուգման ընթացքը կասեցված է, բացառությամբ տրանսֆերային գնագոյացման հարկային հաշվարկների: Ներկայացված հաջորդ փոփոխությունը վերաբերում է համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագիրը հրապարակելու պահանջի ուժը

կորցրած ճանաչելուն: Միաժամանակ, նշվեց, որ համալիր հարկային և տրանսֆերային գնագոյացման ստուգումների հանձնարարագիրը ստուգումն սկսելու օրը ներկայացվում է հարկ վճարողին՝ ծանոթացման: Հաջորդիվ նշվեց, որ հարկային պարտավորությունների առաջադրման ժամկետները լրացած լինելու պարագայում, եթե հարկային պարտավորությունների ճշտման արդյունքում ավելանում է հարկային պարտավորությունը և (կամ) նվազում է հաշվանցվող (պակասեցվող) գումարը, ապա օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան կատարվում են հարկային պարտավորությունների կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների փոփոխություններ:

ՀՀ ՊԵԿ ՎՄԸ վարչության պետ Լ. Հարությունյանի ներկայացրած օրենսդրական հաջորդ նախաձեռնությունը վերաբերում է հարկ վճարողի կամ հարկային գործակալի կողմից վճարվող տույժի դրույքաչափի փոփոխությանը, որով նախատեսվում է 0.04 տոկոս դրույքաչափի փոխարեն սահմանել մինչև կորոնավիրուսը եղած դրույքաչափը՝ 0.075 տոկոս:

Ներկայացված նախագծերի վերաբերյալ խորհրդի անդամները ներկայացրեցին հետևյալ դիտարկումները:

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ ներկայացուցիչ Հ. Սահակյանը նշեց, որ նորմալ է համարում տույժի դրույքաչափի բարձրացումը, որովհետև գործող տույժի դրույքաչափը բանկային տոկոսներից ցածր է և ստացվում է, որ պետությունը կհանդիսանա ֆինանսավորող կառույց: Նշեց, որ անհասկանալի է ստուգման ընթացքում ճշտման հնարավորության բացակայության նպատակը: Միաժամանակ, նշեց, որ առկա է հակասություն, քանի որ ստացվում է մի դեպքում ստուգման ընթացքում հարկ վճարողը չի կարող ճշտել հաշվարկը և ենթարկվում է պատասխանատվության, իսկ մյուս դեպքում ստացվում է, որ առկա է մեխանիզմ, որի համաձայն՝ ստուգումից հետո հարկ վճարողը կարող է ներկայացնել պարտավորությունն ավելացնող հաշվարկ և դրա համար չտուգանվել: Նշեց նաև, որ համակարծիք է, որպեսզի համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագիրը չիրապարակվի: Մյուս դիտարկումը վերաբերում է հարկային պարտավորությունների

առաջադրման ժամկետները լրացած լինելու պարագայում հարկային պարտավորությունների փոփոխություններ կատարելուն, նշելով, որ նպատակահարմար չէ 3 տարուց ավելի վաղեմության ժամկետի համար պարտավորության ավելացման մասով հնարավորության ընձեռումը, քանի որ նույնիսկ գործարար միջավայրում ընդունելի է վաղեմության ժամկետը մինչև 3 տարի և բացի այդ փաստաթղթերի պահպանման հետ կապված հնարավոր է առաջանան խնդիրներ:

Վերջինիս ի պատասխան, ՀՀ ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը նշեց, որ 3 տարվա վաղեմության հետ կապված դրույթը կհանվի և նախատեսվող կարգավորումը կիրառելի կլինի միայն դիմումի հիման վրա:

«Հաշվապահների ասոցիացիայի» ՀԿ ներկայացուցիչ Տ. Շահբազյանը նշեց, որ անհասկանալի է համարում միանգամից ծանուցելու և հարկային ստուգում սկսելու մասով նախատեսվող կարգավորումը, քանի որ հարկ վճարողին ժամանակ չի տրվում պատրաստվելու համար: Ընդհանուր առմամբ, կարծում է, որ համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագիրը չիրապարակելը հարկ վճարողին լարված պահելու միտում է հետապնդում: Նշեց նաև, որ ստուգման ընթացքում ճշտված հաշվարկ ներկայացնելու հնարավորության սահմանափակումը հնարավոր է առաջացնի կոռուպցիոն ռիսկեր և ինչպես է դա հսկվելու:

Վերջինիս ի պատասխան, ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը նշեց, որ երբ նախատեսվում էր ստուգման ընթացքում թույլատրել ճշտված հաշվարկ ներկայացնել, այն ժամանակ ևս նշվում էր, որ դա կառաջացնի կոռուպցիոն ռիսկեր, հիմա երբ նախատեսվում է հանել այդ դրույթը, նշվում է, որ կարող է առաջանալ կոռուպցիոն ռիսկեր, ստացվում է, որ ռիսկը միշտ առկա է լինելու և պետք է վերահսկել այն:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը նշեց, որ դեմ չէ համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագրի չիրապարակմանը և առաջարկեց հանձնարարագրի 3 օր առաջ հարկ վճարողին ծանուցելու դրույթը պահպանել:

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ ներկայացուցիչ Հ. Սահակյանն էլ նշեց, որ եթե ստուգման ընթացքում ճշտման հնարավորությունը պահպանվում է, ապա հանձնարարագիրը հարկ վճարողին կարող է ծանոթացման ներկայացվել ստուգումը սկսելու օրը, իհարկե, եթե տուգանելու միտում չունի նախագծով նախատեսվող կարգավորումը:

ՀՀ ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը նշեց, թե արդյոք ընդունելի կլինի, եթե նախագծում նշվի, որ առկա է ռիսկերի կառավարման համակարգի վրա հիմնված ցանկ, սակայն այն չի հրապարակվելու: Միաժամանակ, նշեց, որ ստուգման ընթացքում ճշտված հաշվարկ ներկայացնելու կարգավորումը հանելը միտված չէ հարկ վճարողին տուգանելու, այլ վերջինիս նպատակը հարկային կարգապահության ուժեղացումն է:

«Իրազեկ հարկատու» ՀԿ նախագահ Ա. Մալխասյանն առաջարկեց, որ թույլատրվի ստուգման ընթացքում ճշտում կատարելը և տվյալ դեպքում կիրառվի տույժի այլ դրույքաչափ: Ներկայացված առաջարկը խորհրդի մի քանի անդամներ համարեցին ոչ նպատակահարմար նշելով, որ ծրագրային փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն կառաջանա, որի համար անհրաժեշտ կլինեն ֆինանսական միջոցներ:

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ ներկայացուցիչ Ա. Հարությունյանը նշեց, որ կիսում է բոլոր մտահոգությունները, որ գոյություն ունեցող կարգավորումները ռիսկեր են պարունակում հնարավորություն տալով թաքցնել հարկերը և միանշանակ առկա են կարգավորելու խնդիրներ: Սակայն կարծում է, որ նախագծով նախատեսվող կարգավորումների միաժամանակյա կիրառումը կառաջացնի ռիսկեր: Նշեց նաև, որ կողմ է տույժի դրույքաչափի բարձրացմանը, սակայն մնացած խնդիրների կարգավորման համար անհրաժեշտ մշակել է այլ մեխանիզմներ :

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը ստուգման ընթացքում ճշտված հաշվարկ ներկայացնելու նախագծով նախատեսվող սահմանափակման վերաբերյալ նշեց, որ հնարավոր է լինի իրավիճակ, որ հարկ վճարողը պետք է ճշտի հաշվարկը, որով հարկի գումարի փոփոխություն չի

նախատեսվում (զուտ հաշվարկի աղյուսակի ինչ-որ տվյալ պետք է ճշտվի, ճշգրիտ պատկեր ստանալու նպատակով) և ստացվում է, որ նախագծով չի թույլատրվում ճշտված հաշվարկ ներկայացնել:

«Աուդիտորների պալատ» ՀԿ նախագահ Ն. Սարգսյանը նշեց, որ ներկայացված նախագծերի վերաբերյալ իր դիտարկումներն ու առաջարկությունները կներկայացնի գրավոր: Միաժամանակ, անդրադարձավ նիստի օրակարգում ներառված հարկային պլանավորման չարաշահման արգելքի նախագծին՝ նշելով, որ նախագծի սահմանումները անհասկանալի են ու անորոշ:

Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը նշեց, որ նախագծի սահմանումները համապատասխանում են միջազգային համաձայնագրերով նախատեսվող սահմանումներին և կիրառվում են զարգացած երկրներում:

«Քեյ փի էմ ջի Արմենիա» ՍՊԸ ներկայացուցիչ Ն. Ներսիսյանը, անդրադառնալով հարկային պլանավորման չարաշահման արգելքին, նշեց, հստակ ձևակերպում չկա և խնդիրը կիրառության հետ կապված է, կարելի է հարկային օրենսգրքով ընդհանուր սահմանում տալ և դատարանները մեկնաբանեն ու կձևավորվի պրակտիկա:

ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը նշեց, որ խորությամբ կուսումնասիրվեն խորհրդի անդամների ներկայացված դիտարկումներն ու առաջարկները, և ըստ անհրաժեշտության կիրականացվեն համապատասխան փոփոխություններ:

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ ներկայացուցիչ Հ. Սահակյանը նշեց, որ կողմ է հարկային պլանավորման չարաշահման արգելքի գաղափարին: Կարծում է, որ պատրաստ լինելու խնդիրն է, քանի որ սա մի գործիք է, որը պարունակում է սուբյեկտիվություն, սակայն պետք է անձինք լինեն օբյեկտիվ, որպեսզի հնարավոր լինի կիրառել:

ՀՀ ՊԵԿ համալիր հարկային ստուգումների վարչության պետի տեղակալ Ն. Ավետիսյանը նշեց, որ 2024թ, հունվարի 1-ից բազմակողմ կոնվեցիան ուժի մեջ է մտնում, որի համաձայն՝ առնվազն 30 երկրի հետ, երբ որ կլինի գործարք և առկա կլինի հարկային պլանավորման չարաշահման ռիսկ, պետք է իրականացվի համապատասխան վարչարարություն, ուստի հարկային օրենսգրքով ևս պետք է

սահմանվեն համապատասխան կարգավորումներ հարկային պլանավորման չարաշահման վերաբերյալ:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ Կ. Կարապետյանը նշեց, որ նախագծով լուրջ հարց է կարգավորում, այն ինչ պետք է սահմանել այնպիսի կարգավորումներ, որ գլոբալ հարցեր կարգավորվեն, ուստի անհրաժեշտ է մշակել այլ մեխանիզմներ:

ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը նշեց, որ ներկայացված մտահոգությունները ու դիտարկումները ընդունելի են, սակայն կարևոր է համարում հարկային պլանավորման չարաշահման արգելքի գաղափարի ներդրումը և քննարկումների արդյունքում ավելի կբարելավեն նախատեսվող կարգավորումները: Միաժամանակ, առաջարկեց նախագծերի վերաբերյալ դիտարկումները ներկայացնել գրավոր:

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ ներկայացուցիչ Ա. Հարությունյանն առաջարկեց օրակարգում ներառված թվային ակտիվների վերաբերյալ նախագիծը քննարկել աշխատանքային ձևաչափով:

Միաժամանակ, պայմանավորվածություն ձեռք բերվեց, առաջիկայում կազմակերպել հաջորդ նիստը՝ օրակարգում ներառված հարկային օրենսդրության փոփոխությունների նախագծերի մասով քննարկումը շարունակելու, ինչպես նաև մաքսային վարչարարությանն առնչվող հարցեր ներկայացնելու նպատակով: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև մինչև հաջորդ նիստը աշխատանքային կարգով քննարկել օրակարգում ընդգրկված, բայց չքննարկված հարցերը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱՐԱԿԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

10/9/2023

X 

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ